Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1342-6

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԾԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ,

ՀՈՍՈՍՏՈՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (Բ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿՈՄԿԱՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԳԱՎԿՈՄԻՆ, ՏԵՔՍՏԻԼ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՒՍ ԲՋԻՇՆԵՐԻՆ, ՏԵՔՍՏԻԼԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ՑԵՐԵՎԱՆ 1929 թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
Պատվ. 416 Գլավլիտ. 2841 բ տ. 350

Լենինականի Գավկոմին, Լենինականի քաղ. կազմակերպության բջիջներին, Տեքստիլ գործարանի կուսբջիջին և Ցեխային բջիջներին, Տեքստիլի կուսկազմակերպության բոլոր անդամներին:

A I/8865

ԸՆԿԵՐՆԵՐ.

Տեքստիլ արդյունաբերության դերն ու տեսակարար կշիռը մեր՝ Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ հսկայական է. տեքստիլը հանդիսանում է և հանդիսանալու է հնգամյակի ընթացքում ժողտնտեսության արդյունաբերության հիմնական ճյուղը: Հնգամյակի ընթացքում նա կլանելու է 20 միլիոնից ավելի հիմնական ներդրումներ և մի քանի հազար նոր բանվորներ. ահա թե ինչու Հայաստանի կոմունիստական կուսակցությունը չի կարող ամենամեծ կարևորությունը չտալ տեքստիլ շինարարությանը և գործարանին, վորն այսոր արդեն ընդգրկում է յերկու հազար արտադրական բանվորներ և տալիս է տարեկան մոտ 5 միլիոն ռուբ. արտադրանք:

Նոր ավարտված 1928-29 տնտեսական տարվա ընթացքում տեքստիլ արդյունաբերությունն ունեցել է խոշոր հաջողություններ, արտադրանքի քանակը աճել է մոտ 98 տոկոսով, վորից մանվածքը՝ 124 տոկ. ինքնարժեքն իջել է մոտ 12 տոկոսով, արտադրական բանվորների միջին ամսական արտադրանքը հասել է 295 ռուբլու, աճելով 23.3 տոկոսով գործված քային գործարանում, 42 տոկոսով մանարանում և 59 տոկոսով տրիկոտաժի գործարանում, զգալիորեն աճել է աշխատա-

վարձը, լավացել են կենցաղային պայմանները, ուժեղացել է աշխատանքի դիսցիպլինան։

Կուսակցական, Կոմյերիտական և պրոֆ. կազմակերպությունների աշխատանքն զգալի նվաճումներ է ունեցել. մասնայականացվել է և հաջող կերպով տարվել է աշխատանքի դիսցիպլինայի բարձրացման կամպանիան, տարածվել է և վորոշ հաջողություններ է ունեցել սոցմրցումը տրիկոտաժի և մասամբ էլ գործվածքային գործարանում, աշխուժացել են արտադրական խորհրդակցությունները, ավելի կանոնավորվել են քաղդաստիարակչական աշխատանքները։

Բայց այս ամենի հետ միասին տեքստիլ արդյունաբերության մեջ ունենք դեռ աչքի ընկնող բացեր և աղաղակող թերություններ։ Այն ժամանակ, երբ Խորհրդային Միության արդյունաբերության վերցրած տեմպերը 1928–29 տնտեսական տարվա համար գերազանցված են, մեր տեքստիլ արդյունաբերությունն իրագործել է կոնտրոլ թվերով նախատեսված իր տարեկան պլանի 58 տոկոսը միայն, նվազեցնելով այսպիսով Խորհրդային Հայաստանի վողջ արդյունաբերության քանակական ցուցանիշները և վտանգի տակ դնելով մեր վողջ հնգամյա պլանի իրագործումը։

Արտադրական պլանի այդ միանգամայն անբավարար իրականացման պատճառներն են յեղել՝ հիմնական ներդրումների ոգտագործման ձգձգումները, հիմնական շինարարության դանդաղ թափը, տեխնիկական կադրերի պակասը, ելեքտր. եներգիայի պակասությունը, և վոր գլխավորն է, գերմանական մեքենաների սարքավորման անթույլատրելի ձգձգումները, արտադրական պրոցեսի անբավարար կազմակերպված լինելը, իր ժամանակին վորակյալ բանվորական ուժ պատրաստելու գործում վճռական ու շատ մինչոցների չդիմելը և կուսակցական ու պրոֆեսիոնալ կազմակեր-

ղությունների թույլ աշխատանքը կոմբինատի բանվո–
րական հասարակայնության ուշադրությունը արտա–
դրական խնդիրների վրա կենտրոնացնելու գործում:
Դեռևս անտանելի վատ են օգտագործվում մեքե–
նաները (մանարանում միջին թելով իլիկների 30–35
տոկոսը չի աշխատում), միանգամայն անբավարար է
արտադրանքի որակը, մանվածքի մանարանում, չա–
փազանց բարձր են վարչա–տնտեսական և վերադիր
ծախսերը, չափազանց ցածր են արտադրության քա–
նակական ցուցանիշները, համեմատած Խորհրդային
Միության կենտրոնական վայրերի գործարանների
հետ, այսպես օրինակ՝ գործվածքի ինքնարժեքը մե–
զանում 36 կ. և կենտրոնի գործարանների 23–25 կ.
դիմաց, 1·000 իլիկը մեզանում մի ժամում արտա–
դրել է միջին 6 ամսվա ընթացքում 260 կիլո–համար,
360–ի դիմաց, 1·000 իլիկին 1928–29 թվին ընկել է
13.49 արտադրական բանվոր (սեպտեմբեր ամսին իջել
է 10.1 բանվորի), իսկ կենտրոնում ընկնում է 5–6 բան–
վոր: Հետ են մնում կենտրոնից և արտադրողականու–
թյունը և հետևաբար աշխատավարձը: Արտադրական
խորհրդակցությունների որոշումների և նրանց կի–
րառման մեջ հաշվառումը բացակայում է, բանվո–
րական առաջարկները և կատարելագործումները բա–
վարար չափով չեն խրախուսվում, բանվորական առա–
ջարկներից ստացված տնտեսումների հաշվառում
չկա և այդ առաջարկները չեն պարգևատրվում, սոց.
մրցումը կազմակերպելու աշխատանքը կամպանիային
բնույթ է կրել, այստեղ ևս հաշվառումը կատարելա–
պես բացակայում է, բացառությամբ [illegible] գոր–
ծարանի: Այս խնդիրները խոշոր չափով անուշադրու–
թյան են մատնված ինչպես թե կոմբինատի և գործա–
րանների վարչությունների, թե կուս. և ԼԿՑԵՄ կազ–
մակերպությունների և թե պրոֆմիությունների կող–
մից:

Մինչեւ 1929–30 տնտեսական տարում մեր սոցիալիստական տնտեսությունը վերցնում է ավելի բարձըր տեմպեր. Հնգամյակը չորս տարում իրագործելու խնդիրը դրվում է այսօր մեր առաջ իբրև միանգամայն ռեալ խնդիր: Խորհրդային Հայաստանի վողջ ժողովրդական տնտեսության զարգացումը ապահովելու համար անհրաժեշտ է, վորպեսզի մեր տեքստիլ արդյունաբերությունը վոչ միայն կատարի իր՝ 1929–30 տարվա համար հնգամյակով նախատեսված ծրագիրը, այլ և լրացնի այն, ինչ վոր թերի յեն մնացել անցած տնտեսական տարիներից: Սա պահանջում է ուժերի մեծ լարումն թե կուսակցական ու մասսայական բոլոր կազմակերպություններից թե մեր տնտեսավարներից, այլապես մենք հետ կը մնանք միութենական արդյունաբերության աճման տեմպից, վորը օրըստօրե արագանում է:

Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը միաձայն ղեկավարության մասին դնում է այն հիմնական ուղին, վորով պետք է վերակազմակերպել աշխատանքները վողջ տնտեսական ղեկավարության մեջ: Աշխատանքի բաժանումը «յեռանկյունու» մեջ պետք է հստակ և վորոշ կերպով ձևակերպվի: Կուսակցական, կոմյերիտական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները չպետք է միջամտեն արտադրության ամենօրյա գործնական խընդիրների լուծմանը, պիտի թողնեն նրա օպերատիվ ղեկավարությունը տնտեսավարներին, վորոնք առաջին հերթին պատասխանատու յեն արդյունաբերության դրության համար կուսակցական և խորհրդային մարմինների առաջ:

Միանձնյա ղեկավարության ուժեղացումը սակայն ամենևին չի զրկում կուսակցական և հասարակական կազմակերպություններին պատասխանատվությունից արտադրության ընթացքի նկատմամբ. ընդհակառակը՝

նա պահանջում է կուսակցական և յայն բանվորական մասսաների հսկողության եւ ավելի ուժեղացում ար–տադրության կազմակերպման և ղեկավարման գործի վրա: Տեքստիլ կոմբինատում, վորտեղ «յերեսները դե–պի արտադրության» լոզունգը դեռ լիովին չի ըմբռն–ված ու մասսայականացված, միանձնյա ղեկավարու–թյան իրացումը պահանջում է վճռական բեկում առա–ջացնել կոմբինատի բոլոր կազմակերպությունների աշխատանքի մեթոդների ու ձևերի մեջ՝ արտադրու–թյան խնդիրների ավելի խորացրած, սիստեմատիկ, ամենօրյա ուսումնասիրության և նրա զարգացման ըն–թացքի վրա արթուն հսկողության սահմանելու տե–սակետից:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը անհրաժեշտ է համարում կեն–տրոնացնել տեքստիլի կուսկազմակերպության ուշա–դրությունը հետևյալ խնդիրների վրա.

1. Հիմնական ներդրումների նպատակահարմար և ժամանակին օգտագործումը, արդֆինպլանների կազ–մումը, տեխնիքական պերսոնալի վորակի բարձրա–ցումը, հում նյութի, մատերիալների և մասերի ժա–մանակին հայթայթումը, պլանների կատարման ըն–թացքը, արտադրական պրոցեսի կանոնավորման և ռացիոնալացման խնդիրներն ընդհանրապես, ինքնար–ժեքի իջեցումը, նրա առանձին էլեմենտների մանրա–կրկիտ ուսումնասիրությունը, արտադրանքի վորակի բարձրացումը՝ այս խնդիրները պիտի դառնան կազ–մակերպության առօրյա քննության նյութ:

2. Առանձին ուշադրության պիտի արժանանա վա–րակյալ բանվորական ուժ պատրաստելու գործը, վո–րին ձեռնարկված է միայն վերջերս: Աշխատանքի կեն–տրոնական ինստիտուտի կուրսերը և ֆաբգործուս–առաջին լուրջ քայլերն են այդ ուղղությամբ, սակայն նրանք լոկ մինիմալ չափով կարող են բավարարել ըն–

գործակցով տպագրության կարիքները. այդ ցանկի հանձնման հետ միասին պետք է լրջորեն ընել ար-դրական կրթության և տպագրական պրոպագանդայի ծավալման խնդիրը թե կուսակցական, թե անկուսակցական բանվորների շրջանում. տպագրական անգրագիտությունը ու կիսագրագիտությունը վերացնելու հարցը պակաս կարևոր չէ, քան քաղաքական գրագիտությունը: *Կուս. կոմյերիտ. և պրոֆ. կազմակերպությունները իրենց աշխատանքի մեջ խոշոր տեղ պետի տան այս խնդրին:*

3. *Մասնագիտական տնտեսական աշխատանքներին աջակցում անհրաժեշտ է* ավելի սիստեմատիկ և պլանավորված աշխատանք տանել, *քան մինչև այժմ. տպագրական խորհրդակցությունների որոշումների կիրառմանը պետք է հետևեն և պրոֆ. և կուս. կազմակերպությունները, կանգ չառնելով կուսակցության և խորհրդային օրգանների ղեկավարները այդ խընդրում խախտողներին ամենախիստ պատասխանատվության կանչելու առաջ: Արտադրական խորհրդակցություններն ու հանձնաժողովները, բանվորական բրիգադաները, ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովները պետք է դառնալ իրապես այն կենտրոնները, որոնց մի կողմից՝* բանվորական մասսան հնարավորություն է ստանում իրականացնել իր հսկողությունը և հայտնաբերել իր մասնակցությունը արտադրության ղեկավարության գործին, մյուս կողմից՝ դաստիարակվելու են ու ամրեցնելու տպագրական ակտիվը, առաջ քաշման ռեզերվը: *Արտադրական ակտիվի պատրաստման գործը* (նամանավանդ կանանցից) *նույնպես պետք է դրվի իբրև օրվա հրատապ խնդիրներից մեկը:*

4. *Կուսակցական կազմակերպության համար պարզ պետք է լինի, որ* սոցմրցակցությունը կամպանիա չէ,

այլ առօրյա աշխատանքի նոր և հիմնական մեթոդ: *Ապահովելով իր մշտական հսկողությունը ու աջակցությունն այդ գործին, կուսկազմակերպությունը պետք է օգտագործի այն ակտիվությունը, վոր հանդես բերվեց բանվորական մասսայի կողմից սոցմրցման արդյունքների ստուգման ընթացքում և նոր հունի մեջ դնի այդ ամբողջ գործը, մանավանդ մանարանում, վորտեղ սոցմրցման գործը բացարձակապես անհաջողության է մատնված յեղել:*

5· *Մասնագետների կտրվածությունը հասարակական կազմակերպություններից, նրանց վորակի անբավարար լինելը, վորոշ սպեցատյացության նշաններ բանվորների շրջանում՝ այս վնասակար յերևույթների վերացումը կուսկազմակերպությունը պետք է ապահովի ուժեղացնելով բացատրական աշխատանքը բանվորների մեջ մի կողմից՝ և լծելով մասնագետներին պրոֆմիությունների, արտադրական խորհրդակցությունների և ինժ.—տեխնիքական սեկցիայի աշխատանքներին՝ մյուս կողմից:*

6· *Աշխատանքի արտադրողականության բարձրացումը մնում է հիմնական նախապայմանը թե՛ արդյունաբերության հետագա զարգացման, և թե՛ բանվորության նյութական դրության բարելավման: Ընթացիկ տնտեսական տարվա ընթացքում աշխատավարձը պետք է բարձրանա տեքստիլ արդյունաբերության մեջ զգալի չափով, սակայն այդ բարձրացման միայն աննշան տոկոսն է կատարվելու մեխանիկորեն, հիմնականում աշխատավարձի բարձրացումը կախված է լինելու արտադրողականության բարձրացումից.* անհրաժեշտ է, վորպեսզի այս հանգամանքը գիտակցի յուրաքանչյուր կուսակցական, կոմյերիտական և անկուսակցական բանվորը: *Յեվ քանի վոր արտադրողականության բարձրացումը կախված է վոչ միայն բան-*

վորից, այլև արտադրության կանոնավոր կազմակերպումից, բանվորական հասարակայնության ուշադրությունից չպիտի վրիպի և այս վերջին խնդիրը:

7. Սկսած հավաքական պայմանագրերի կամպանիայի հիմնական իմաստը պիտի կայանա բանվորներին արտադրական ծրագրերի ու 5-ամյա պլանի իրականացման լոզունգների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու մեջ: Ուժեղացնելով ու ավելի խիստ դարձնելով հսկողությունը հավաքական պայմանագրերի կիրառման վրա, պետք է մասսայականացնել այն միտքը, որ հավաքական պայմանագիրը յերկողմանի պարտավորագիր է, որով թե տնտեսավարը, թե բանվորը պարտավորվում են ապահովել սոցիալիստական արտադրության աճումը:

8. Բանվորների և մանավանդ բանվորուհիների կենցաղային պայմանները վոչ պակաս նշանակություն ունեն արտադրողականության բարձրացման տեսակետից. բնակարանների, մանկամսուրի, կոոպերատիվի ու հայթայթման հարցերով ավելի ուշադիր ու մանրակրկիտ պետք է զբաղվել, քան մինչև այժմ. այն հանգամանքը, որ հիվանդությունների թիվը բանվորների մեջ վերջերս բավական աճել է՝ ցույց է տալիս, որ տեղական կազմակերպությունները դեռ հարկ յեղած չափով չեն հետևում այդ խնդիրներին, մասնավորապես, աշխատանքի պաշտպանության գործին ու համապատասխան պայմանագրերի կիրառմանը:

9. Քաղաքատիպարակչական աշխատանքները, վորոնք մինչև այժմ ընթացել են հին տեմպով ու հին շաբլոնով, պիտի ընդգրկեն այս տարի վողջ բանվորությունը և լեցվեն արտադրական բովանդակությամբ: Առանձնապես հարկավոր է ուժեղացնել այդ աշխատանքները ադգային փոքրամասնությունների,

ռուս, թյուրք և քյուրդ բանվորների մեջ, վորոնց թիվըն արդեն հասնում է մոտ 150-ի, և վորոնք մինչև այժմ հարկավոր չափով չեն օգտագործվել թե կուսակցական, թե այլ կազմակերպությունների կողմից: Ուժեղացնելով քաղդաստիարակչական աշխատանքները՝ միաժամանակ անհրաժեշտ է ավելի լուրջ հողի վրա դնել սիստեմատիկ աշխատանքը անկուսակցական բանվորական ակտիվի հետ՝ ապահովելու համար կուսկազմակերպության անընդհատ աճումը՝ անկուսակցական ակտիվի և գիտակից բանվորների ու բանվորուհիների հաշվին:

10. Հիմնովին պետք է փոխվեն կուսակցական ղեկավարության մեթոդներն ու ձևերը կամբինատում. այն վարչականությունը, վոր վորոշ դեպքերում նըկատվել է կուսկոլլեկտիվի կողմից դեպի հասարակական կազմակերպությունները և հենց դեպի կուսաշխատանքը՝ պիտի արմատախիլ արվի, փոխարինվի մասսաներին ղեկավարելու և հիմնական քաղաքական ու տնտեսական խնդիրների շուրջը համախմբելու խորացված ձևերով: Վճռական միջոցներ են հարկավոր ակտիվի և մանավանդ կանանց ակտիվի պատրաստման գործում:

Կենտրոնական Կոմիտեն հատկապես կուսկազմակերպության ուշադրությունն է հրավիրում ինքնաքննադատությունը թուլացնելու, բանթղթակիցներին սաստելու այն փորձերի վրա, վորոնք տեղի յեն ունեցել տեքստիլի մի քանի ղեկավար աշխատողների կողմից: Ամենաանողոք հակահարվածը պիտի տալ կուսակցական գիծն այդ ձևով խեղաթյուրողներին: Ինքնաքննադատությունը տեքստիլում դեռ այնքան քիչ է ծավալված, վոր առանց վախենալու և վճռականորեն պետք է ծավալ տալ նրան բոլոր կազմակերպությունների ուղղությամբ, միաժամանակ աշխատելով բարձրացնել այդ ինքնաքննադատության վորակը:

Մեր առաջ դրված խնդիրներն այսոր բարդ են և բազմապան, հին մեթոդներով ու տեմպով այդ խնդիրների լուծումն անհնար է: Տեքստիլի կուսակցական և ապա մյուս կազմակերպությունները պետք է վերակառուցեն իրենց աշխատանքի վոգի սիստեմը, փոխարինեն կամպանիան և մակերեսային աշխատանքը խորացրած, մշտական, սիստեմատիք աշխատանքով, ոգտագործելով և ուշադրություն տալով այն անսպառ վոգեվորությանը, վորով տոգորված է մեր բանվորությունը, լծելով մասսաների նախաձեռնությունն ու ստեղծագործական յեռանդը սոցիալիստական շինարարության թափի արագացման գործին: Հկ(բ)կ Կենտկոմը լիահույս է, վոր տեքստիլի կուսակցական կազմակերպությունը, Լենինգրադի վոգի կազմակերպության ուժանպակությամբ, կը կարողանա վերացնել նկատված հիմանդագին յերևույթները, վերակառուցել իր աշխատանքը, կատարել հիմնական բեկումն գեպի արտադրությունը և ապահովել 1929–30 տնտեսական տարվա լարված պլանի կատարումը՝ բանվորական վոգի մասսայի դասակարգային–քաղաքական մակարդակի բարձրացման և նրա արտադրական նախաձեռնության ու վոգևորության միջոցով:

Հկ(բ)կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

23 հոկտեմբերի, 1929 թ.
Յերևան

(034)
A 88
A 8865
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045634